ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 192

<<18>> մայիսի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՀՈՎՈՒՆԻ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.141083 ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի թիվ 33 որոշումը և 2021 թվականի մայիսի 05-ի Մարմաշենի համայնքապետարանում կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ կազմված 2021 թվականի մայիսի 05-ին թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող (բնակավայր՝ Հովունի) 08-071-0102-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.141083 հեկտար IV կարգի ջրովի գործառնական նշանակության վարելահողը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետով 15400 /տասնհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել մրցույթի արդյունքում

հաղթող ճանաչված մասնակից քաղաքացի՝ Մանուկ Արշակի Սարգսյանին, բնակվող Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Հովունի, 3-րդ փողոց, տուն 4 հասցեում, անձնագիր՝ AN 0397763, տրված՝ 05.03.2013թ, 030-ի կողմից և կնքել հողի վարձակալության պայմանագիր:

2.Պարտավորեցնել վարձակալին՝ վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները սահմանված կարգով և ժամկետում ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

18.մայիսի.2021 թվական
Գյուղ Մայիսյան